Հավելված № 5
«ԳԱԿ- ՇՀԱՊԲ-11/11» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

№ «ՀՀ ԿՄ ԲԳ -ՇՀԱՊՁԲ-11/11/1» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու ՀՀ
Ընթացակարգի մասնակցի անվանումը
Բջնիի գյուղապետարանի աշխատակազմի կողմից № «ՀՀ ԿՄ ԲԳ -ՇՀԱՊՁԲ-11/11/1»

ծածկագրով հայտարարված ընթացակար չափաբաժնին (չափաբաժիններ (չափաբաժնի (չափաբաժինների) համարը) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին
բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն-ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«ՀՀ ԿՄ ԲԳ -ՇՀԱՊՁԲ-11/11/1» ծածկագրով տնտեսական

Սանիտարահիգենիկ և լվացքի միջոցների շրջանակային համաձայնագրի

շրջանակներում գրանցված մասնակիցներին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի՛ մասնակից

«ՀՀ ԿՄ ԲԳ ՇՀԱՊՁԲ-11/11/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Կոտայքի մարզի Բջնի գյուղապետարանի աշխատակազմի 2014 թվականի կարիքների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված կենցաղային և հանրային սննդի նյութերիմատակարարում:

Գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել kotayk-bjni էլեկտրոնային կայքի միջոցով կամ փոստով մինչև 2014 թ-ի հունիսի 18 -ը ժամը 15-00 : Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով, kotayk-bjni էլեկտրոնային կայքի միջոցով՝ 2014 թվականի հունիսի 18 -ին՝ ժամը 15.00 ին: գ,Բջնի 1-ին փող-102 գյուղապեարանի վարչական շենք 2-րդ հարկ

Մասնակիցը ներկայացնում է իր կողմից հաստատված՝

- գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, որին կցվում է տեխնիկական առաջարկը (№ 5 հավելված), ընդ որում՝ պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն.

- գնային առաջարկ (№ 5.1 հավելված):

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54բ հասցեով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Անահիտ Բալաբեկյանին :

Կից ներկայացվում է կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Էլ.փոստ kotayk-bjni @mail,ru

Բջնիի գյուղապետարանի աշխատակազմ

Նախագիծ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ

№ ՀՀ ԿՄ ԲԳ -ՇՀԱՊՁԲ-11/11/1

Գ.Բջնի 2014 թ.

Բջնի գյուղապետարանի աշխատակազմը ի դեմս գյուղապետ Ա.Մաթևոսյանի .որը գործումէ կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և

---------- (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գյողապետարանին կենցաղային և հանրային սննդի նյութերի մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի № 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան, և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) չընդունելու Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջելու Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվելու սույն պայմանագիրը կատարելուց և պահանջելու վերադարձնել Ծառայության համար վճարված գումարը և պահանջելու Կատարողից վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծելու սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը,

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջելու վճարել իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (№ 4 հավելված):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում, և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կատարողի նկատմամբ կիրառվում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. Պայմանագրի գինը

Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է---------- ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է, և Կատարողն իրավունք չունի պահանջելու ավելացնել, իսկ Պատվիրատուն նվազեցնել այդ գինը:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի № 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն մասում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից

գանձվում է տուգանքը՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացոյցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 %-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի

միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները որոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետևյալ կերպ.

կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և

դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի №№ 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած 4 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կոտայքի մարզ Բջնի գյուղապետարանի աշխատակազմ	
Գ.Բջնի 1-ին փող.-102	
ՀՀ Ֆինանսների նախարարություն	
Գ/Հ 900132116022	
ՀՎՀՀ 03001602	
Գյուղապետ Ա.Մաթևոսյան	
_____	
(ստորագրություն)	

Հավելված N1
2014 թ. _____ ____ -ին կնքված
№ ՀՀ ԿՄ ԲԳ - ՇՀԱՊՁԲ-11/11/11գնման պայմանագրի

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

№	Բնութագրի տարրերը	Չափի միավորը	Տեխնիկական բնութագիրը
1	Էլեկտրական թեյնիկ	հատ	1,5-2,0 լ իտր տարողությամբաշխատում է 220v հոսանքով պլաստմասսայից
2	Էլեկտրական սրճեթ	հատ	0.5 լիտր տարողությամբ, էբոնիտե բռնակով, հզորությունը220V
3	Սուրճի և թեյի բաժակներ	հատ	100-200 մլ տարողությամբ ճենապակյա
4	Հոսանքի եռաբևեռ	հատ	Եռաբաշխիչ 4տ, Նախատեսված (220-250) Վ հոսանքի լարման , մինչև 6 Ա հզորության
5	Հոսանքի եռաբևեռ էլեկտրական լարով 3մ	հատ	Եռաբաշխիչ 4տ, 3մ լարով Նախատեսված (220-250) Վ հոսանքի լարման , մինչև 6 Ա հզորության
6	Էլեկտրական լամպ150W	հատ	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50Հց հաճախականության 150Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳՕՍՏ 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված “Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:
7	Ջրի խողովակ	Գծմ/	Ճկուն 90 սմ երկարությամբ
8	Դռան փական	հատ	Տեղադրվում է դռան բազրիքի մեջ պահեստային երեք բանալիով

9	Մաքրող նյութեր	հատ	Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %, ԳOUS 25644-96 Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի''
10	Բնական գազի ռետինե խողովակ	գծմ	Ճկուն ռետինե 15 մ երկարությամբ
11	Կաթսա	հատ	8 լիտր տարողությամբ չժանգոտվող պողպատից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ԿԱՏԱՐՈՂ**

Կոտայքի մարզ Բջնի գյուղապետարանի
աշխատակազմ

Գ.Բջնի 1-ին փող.-102

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Գ/Հ 900132116022

ՀՎՀՀ 03001602

Գյուղապետ Ա.Մաթևոսյան

(ստորագրություն)

Կ. Տ.

«____» _____ 2014 (
ամսաթիվը, ամիսը)

Հավելված № 5.1
«ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
№ «ՀՀ ԿՄ ԲԳ -ՇՀԱՊՁԲ-11/11/1» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված № «ՀՀ ԿՄ ԲԳ -ՇՀԱՊՁԲ-11/11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը՝

_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափաբաժին–ների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեքը*	ԱԱՀ-ն*	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը (տառերով և թվերով)
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1				
2				
3				

* 3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:
**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

_____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն-ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված ***N 2***

«__» ----------2014թ. կնքված

N ՀՀԿՄԲԳ ՇՀ ԱՊՁԲ1 1/11/1 գնման պայմանագրի

Գնման ժամանակացույց

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Գնման առարկայի անվանումը	***Չափման միավորը***	***Քանակը***	***Մատակարարման ժամկետը***
Էլեկրական թեյնիկ	հատ	1	Երկրորդ –երրորդ եռամսյակներ
Էլեկտրական սրճեփ	հատ	2	
Սուրճի . թեյի բաժակներ	հատ	18	
Հոսանքի եռաբևեռ	հատ	4	
Հոսանքի էլեկտրական երկարացման լար	Գծմ/հատ	6/3	
Էլեկտրական լամպ100/150W	Հատ	20	
Ջրի ճկուն խողովակ	Գծմ/հատ	2/5	
Դռան փական	Հատ	4	
Մաքրող նյութեր	Հատ	6	
Բնական գազի խողովակ	Գծմ	15	
Կաթսա	Հատ	1	

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
Բջնի համայնքի ղեկավարի աշխատակազմ	Կ.Տ
Կոտայքի մարզ գ,Բջնի 1-ին փող102	
Չարենցավանի ՏԳԲ	
h/h 900132116022	
ՀՎՀՀ 03001602	
Գյուղապետ ----------Ա Մաթևոսյան	

Հավելված N 3

«_» _ ----------2014թ. կնքված

N ՀՀԿՄԲԳ ՇՀ ԱՊՁԲ 11/11/1 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի անվանումը		Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թվականի բյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝					
								Ընդամենը Տարի
1	***Տնտեսական սանիտարահիգենիկ և լվածքի միջոցներ***		Նախատեսվում է 100 % վճարել աշխատանքների ավարտի և հանձնման- ընդունման արձանագրության հիման վրա 10 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ՝ 25.12.2014թ.:					100%

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգ

Պ ա տ վ ի ր ա տ ու

Բջնի համայնքի ղեկավարի աշխատակազմ

Կոտայքի մարզ գ,Բջնի 1-ին փող102

Չարենցավանի ՏԳԲ

h/h 900132116022

ՀՎՀՀ 03001602

Գյուղապետ ----------Ա Մաթևոսյան

(ստորագրություն)

Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ

Կ.Տ

Հավելված № 4

2014 թ. ---------- ------ -ին կնքված

№ ՀՀԿՄԲԳ - ՇՀԱՊՁԲ-11/11/1գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	***ԿԱՏԱՐՈՂ***
Կոտայքի մարզ Բջնիի գյուղապետարանի	----------
Աշխատակազմ	
Գ.Բջնի 1-ին փող.-102	----------
ՀՀ ֆինանսների նախարարություն	----------
Գ/Հ 900131116022	
ՀՎՀՀ 03001602	----------

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն №

ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

«--------» ---------- 2014 թ.

Պայմանագրի անվանումը՝ «----------»

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝«---------» ---------- 2014 թ.

Պայմանագրի համարը՝ № ----------

Պատվիրատուն, Բջնիի գյուղապետարանի աշխատակազմը ի դեմս գյուղապետ ի Ա.Մաթևոսյանի և Կատարողը, ի դեմս ----------, հիմք ընդունելով այն, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետ՝ ծառայություններ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը 2014 թ. ---------- ----- -ից 20—- թ. ---------- --- ---- -ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները:

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոնշյալ աշխատանքների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը համարվում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
_____	_____
(անուն-ազգանուն)	(անուն-ազգանուն)
Կ. Տ.	Կ. Տ.